1911

ԹՈՄԱՍ ՀՈՒԴ

ՓՈԹՈՐԻԿ

Ծովը խառնըված,
Շանթ, հողմ ու կարկուտ.
Երկինքը բըռնած
Մեգ, մըռայլ ու մութ։

5 Խըռոված տարերք
Իրար են եկել,
Երկինք ու եզերք
Փակել, մթագնել։

Ծովի ահագին
10 Խորքերն հիմն ի վեր,
Ավազն ալիքին
Խառնող դուք ուժեր,—

Ինչ եք շըպըրտում
Ցայտերն ամպերին,
15 Ինչ եք ըսպառնում
Զըկնորսի նավին։

Կըռվում տըրորված,
Դալկացած հեգին

Մի տաք փըրփըրած
Ջրի հորձանքին։
Կայծակի փայլով
Թողեք խեղճ մարդուն,
Թողեք ապահով
Հասնի իրեն տուն։

Էնտեղ ձեռները
Մեկնած երկնքին՝
Մընում են փոքրերն
Իրենց հայրիկին։

Կինն էնտեղ լալով
Աղոթք է անում...
Ինչ եք աղքատի
Նավին ըսպառնում։

Օ՜, հասի՜ր շուտով,
Աստված բարերար,
Հուզված է ծովը,
Երկինքը՝ խավար...